

ԿՈՆՎԵՆՑԻԱ
ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԿՆՔՎՈՂ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐՈՒՄ
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀՈՂՎԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Աշխատանքի միջազգային կազմակերպության Գլխավոր խորհրդաժողովը, գումարված Աշխատանքի միջազգային բյուրոյի Վարչական խորհրդի կողմից եւ հավաքված ժնեւում 1949 թ. հունիսի 8-ին՝ իր երեսուներկուերորդ նստաշրջանին, որոշում կայացնելով պետական մարմինների կողմից կնքվող պայմանագրերում աշխատանքային հողվածների մասին որոշ առաջարկություններ ընդունելու վերաբերյալ, որը նստաշրջանի օրակարգի վեցերորդ կետն է, որոշելով, որ այդ առաջարկությունները պետք է ունենան միջազգային կոնվենցիայի ձև, հազար ինը հարյուր քառասունինը թվականի հունիսի 29-ին ընդունում է ներքոհիշյալ Կոնվենցիան, որը կանվանվի Պետական մարմինների կողմից կնքվող պայմանագրերում աշխատանքային հողվածների մասին 1949թ. Կոնվենցիա:

ՀՈՂՎԱԾ 1

1. Սույն Կոնվենցիան կիրառվում է այն պայմանագրերի նկատմամբ, որոնք համապատասխանում են հետեւյալ պայմաններին.

- ա) պայմանագրի Կողմերից առնվազն մեկը պետական մարմին է,
- բ) պայմանագրի կատարումը կապված է.
 - i) պետական մարմնի կողմից միջոցների ծախսման հետ, եւ
 - ii) պայմանագրի մյուս կողմի կողմից աշխատողներ վարձելու հետ,
 - գ) պայմանագիրը կնքվում է.
 - i) հասարակական կառույցների շինարարության, վերափոխման, նորոգման կամ քանդման նպատակով, կամ
 - ii) նյութերի, գործիքների կամ սարքավորումների արտադրության, հավաքման, պահպանման կամ տեղափոխման նպատակով, կամ
 - iii) ծառայությունների տրամադրման կամ կատարման նպատակով, եւ
 - դ) պայմանագիրը կնքվում է Աշխատանքի միջազգային կազմակերպության անդամի կենտրոնական մարմնի կողմից, որի նկատմամբ Կոնվենցիան մտել է ուժի մեջ:

2. Իրավասու մարմինը սահմանում է, թե ինչ չափով եւ ինչպիսի պայմաններում է Կոնվենցիան կիրառվում կենտրոնական մարմնից այլ մարմինների կողմից կնքվող պայմանագրերի նկատմամբ:

3. Սույն Կոնվենցիան կիրառվում է ենթակապալառուների կամ կապալառուի իրավահաջորդների կողմից իրականացվող աշխատանքների նկատմամբ: Իրավասու մարմինն

անհրաժեշտ միջոցներ է ձեռնարկում նշված աշխատանքների նկատմամբ Կոնվենցիայի կիրառումն ապահովելու համար:

4. Այն պայմանագրերը, որոնք իրենց հետ բերում են պետական միջոցների ծախսեր իրավասու մարմինների կողմից որոշված սահմանը չգերազանցող գումարի չափով, գործատուների եւ աշխատողների համապատասխան կազմակերպությունների հետ (եթե այդպիսիք գոյություն ունեն) խորհրդակցելուց հետո կարող են հանվել սույն Կոնվենցիայի կիրառման ոլորտից:

5. Իշխանության իրավասու մարմինը գործատուների եւ աշխատողների համապատասխան կազմակերպությունների հետ (եթե այդպիսիք գոյություն ունեն) խորհրդակցելուց հետո կարող է սույն Կոնվենցիայի կիրառման ոլորտից հանել այն անձանց, որոնք զբաղեցնում են ղեկավար պաշտոններ, կամ որոնց աշխատանքը կրում է տեխնիկական, մասնագիտական կամ գիտական բնույթ, որոնց վարձման պայմանները չեն կարգավորվում ազգային օրենսդրությամբ, կլլեկտիվ պայմանագրով կամ միջնորդ դատարանի որոշմամբ, եւ որոնք սովորաբար ֆիզիկական աշխատանք չեն կատարում:

ՀՈՂՎԱԾ 2

1. Պայմանագրերը, որոնց նկատմամբ կիրառվում է սույն Կոնվենցիան, պետք է պարունակեն համապատասխան հոդվածներ շահագրգիռ աշխատողներին աշխատավարձ (ներառյալ՝ հավելավճարներ), աշխատաժամանակի տեւողություն եւ աշխատանքի այլ պայմաններ երաշխավորող հոդվածներ, որոնք պակաս բարենպաստ չեն, քան տվյալ շրջանում համապատասխան մասնագիտությունների կամ արդյունաբերության ճյուղերի համանման բնույթի աշխատանքների նկատմամբ սահմանված պայմանները, ուր աշխատանքն իրականացվում է.

ա) համապատասխան մասնագիտության կամ արդյունաբերության ճյուղերի գործատուների եւ աշխատողների զգալի մասը ներկայացնող գործատուների եւ աշխատողների կազմակերպությունների միջեւ կոլեկտիվ պայմանագրերով կամ բանակցություններ վարելու ճանաչված այլ ձեւերով,

բ) կամ միջնորդ դատարանի որոշմամբ,
գ) կամ ազգային օրենսդրությամբ:

2. Այն դեպքերում, երբ այդ շրջանում կատարվող աշխատանքի պայմանները չեն կարգավորվում նախորդ կետում նշված ձեւերից որեւէ մեկով, պայմանագրում ընդգրկվող հոդվածները համապատասխան աշխատողներին երաշխավորում են աշխատավարձ (ներառյալ՝ հավելավճար), աշխատաժամանակ եւ այլ պայմաններ, որոնք պակաս բարենպաստ չեն, քան՝

ա) կոլեկտիվ պայմանագրով կամ բանակցությունների այլ ձեւով, միջնորդ դատարանի որոշմամբ կամ ազգային օրենսդրությամբ ընդունված մոտակա համապատասխան

շրջանում համապատասխան մասնագիտությունների կամ արդյունաբերության ճյուղերի համանման բնույթի աշխատանքների նկատմամբ կոլեկտիվ պայմանագրով կամ այլ ձեւով սահմանված պայմանները, կամ

բ) ընդհանուր մակարդակը, որոնք պահպանվում են պայմաններում գտնվող եւ նույն արտադրությունում կամ մասնագիտությունում գործող գործատուների կողմից, ինչ կողմը, որոնք հետ պայմանագիր է կնքվում:

3. Պայմանագրերում ներառման ենթակա հոդվածների դրույթները, ինչպես նաեւ այդ դրույթների տարբեր փոփոխությունները գործատուների եւ աշխատողների համապատասխան կազմակերպությունների հետ (եթե այդպիսիք գոյություն ունեն) խորհրդակցելուց հետո իրավասու մարմնի կողմից սահմանվում են այնպիսի ձեւով, որոնք ավելի համապատասխան են ազգային պայմաններին:

4. Իրավասու մարմինը ձեռնարկում է համապատասխան միջոցներ, պայմանագրերի պայմանների հրապարակման կամ ցանկացած այլ միջոցով, որպեսզի մրցույթին մասնակցող կապալառուները տեղեկացված լինեն հոդվածների պայմաններին:

ՅՈՒՐԱԾ 3

Այն դեպքերում, երբ պայմանագրերով աշխատողների առողջությանը, անվտանգությանը եւ բարեկեցությանը վերաբերող համապատասխան դրույթները ազգային օրենսդրության, կոլեկտիվ պայմանագրի կամ միջնորդ դատարանի որոշման ուժով արդեն կիրառելի չեն, իրավասու մարմինն անհրաժեշտ միջոցներ է ձեռնարկում այդ աշխատողներին արդար եւ ողջամիտ կերպով առողջապահության, անվտանգության եւ բարեկեցության պայմաններով ապահովելու համար:

ՅՈՒՐԱԾ 4

Սույն Կոնվենցիայի դրույթները կիրարկող կանոնակարգերը եւ այլ ակտերը պետք է.

- ա) i) տեղեկացնեն բոլոր շահագրգիռ անձանց,
- ii) սահմանեն այն անձանց, որոնք պատասխանատու են դրանց կատարումն ապահովելու համար,

iii) պարունակեն պահանջներ այն մասին, որ ձեռնարկություններում կամ աշխատանքի վայրում երեւացող մասերում տեղադրվեն հայտարարություններ՝ աշխատողներին իրենց աշխատանքի պայմանների մասին տեղեկացնելու նպատակով, բ) բացառության այն դեպքերի, երբ ձեռնարկվում են դրանց արդյունավետ կատարումն ապահովող այլ միջոցներ, նախատեսեն.

i) համապատասխան գրանցումներ աշխատանքային օրվա տեւողության եւ համապատասխան աշխատողներին վճարվող աշխատավարձի մասին, եւ

ii) դրանց արդյունավետ կիրառումն ապահովելուն ընդունակ տեսչական համակարգ:

ՅՈՒՐԱԿԱՆ 5

1. Պետական մարմինների կողմից կնքված պայմանագրերում ընդգրկված աշխատանքային հոդվածների դրույթների չպահպանելու եւ չկատարելու դեպքում կիրառվում են համապատասխան պատժամիջոցներ՝ պայմանագրերից հրաժարվելու կամ այլ

ձեւերով:

2. Աշխատողներին աշխատավարձ ստանալու հնարավորություն ապահովելու նպատակով, որի իրավունքը նրանք ունեն, կիրառվում են անհրաժեշտ միջոցներ՝ պայմանագրի պայմաններին համաձայն պահումների կամ այլ ձեւով:

ՅՈՒՐԱԿԱՆ 6

Աշխատանքի միջազգային կազմակերպության Կանոնադրության 22-րդ հոդվածին համապատասխան ներկայացվող տարեկան զեկույցում ամբողջական տեղեկություններ են բերվում սույն Կոնվենցիայի դրույթների կատարմանն ուղղված միջոցառումների մասին:

ՅՈՒՐԱԿԱՆ 7

1. Եթե Կազմակերպության անդամի տարածքում գոյություն ունեն մեծ շրջաններ, որտեղ բնակչության ցրվածության եւ զարգացման մակարդակի հետեւանքով իրավասու մարմինը անհրաժեշտ է համարում սույն Կոնվենցիայի դրույթների կիրառումը, այդ մարմինը գործատուների եւ աշխատողների համապատասխան կազմակերպությունների հետ

խորհրդակցելուց հետո, որտեղ այդպիսիք գոյություն ունեն, հանում է այդպիսի շրջանները սույն Կոնվենցիայի կիրառման շրջանակներից կամ ամբողջությամբ, կամ բացառությամբ որոշ ձեռնարկությունների, կամ այն մասնագիտությունների, որոնք ինքը նպատակահարմար է համարում:

2. Յուրաքանչյուր անդամ սույն Կոնվենցիայի կիրառման մասին Աշխատանքի միջազգային կազմակերպության Կանոնադրության 22-րդ հոդվածին համապատասխան ներկայացված իր տարեկան առաջին զեկույցում նշում է բոլոր այն շրջանները, որոնց առնչությամբ ինքը պատրաստվում է օգտվելու սույն հոդվածի դրույթներից, ինչպես նաեւ այն պատճառները, որոնց համար ինքը նպատակ ունի օգտվելու այդ դրույթներից: Իր առաջին տարեկան զեկույցից հետո Կազմակերպության ոչ մի անդամ չի կարող օգտվել սույն հոդվածի դրույթներից՝ բացառությամբ նշված շրջանների առնչությամբ:

3. Սույն հոդվածի դրույթներով նախատեսված իրավունքից օգտվող յուրաքանչյուր անդամ ոչ պակաս, քան երեք տարին մեկ անգամ, գործատուների եւ աշխատողների շահագրգիռ կազմակերպությունների հետ խորհրդակցելով, եթե այդպիսիք գոյություն ունեն, վերանայում է 1-ին կետի հիման վրա կիրառման ոլորտից հանված շրջանների վրա սույն Կոնվենցիայի կիրառումը տարածելու հնարավորության հարցը:

4. Սույն հոդվածի դրույթներով նախատեսված իրավունքից օգտվող յուրաքանչյուր անդամ իր հետագա տարեկան զեկույցներում նշում է այն շրջանները, որոնց առնչությամբ ինքը հրաժարվում է օգտվել սույն հոդվածի դրույթներով նշված իրավունքներից, ինչպես նաեւ նշում է բոլոր այն միջոցները, որոնք ինքը ընդունել է սույն Կոնվենցիայի կիրառումը նման շրջաններում աստիճանաբար տարածելու

Նպատակով:

ՀՈՂ-ՎԱԾ 8

Ազգային բարեկեցության կամ անվտանգության համար սպառնալիք ներկայացնող անհաղթահարելի ուժի (ֆորս-մաժոր) կամ արտակարգ իրավիճակի դեպքում իրավասու մարմինը գործատուների եւ աշխատողների համապատասխան կազմակերպությունների հետ

խորհրդակցելուց հետո, որտեղ այդպիսիք գոյություն ունեն, կարող է ժամանակավորապես կասեցնել սույն Կոնվենցիայի դրույթների կիրառումը:

ՀՈՂ-ՎԱԾ 9

1. Սույն Կոնվենցիան չի կիրառվում Կազմակերպության տվյալ անդամի կողմից կնքված այն պայմանագրերի նկատմամբ, որոնք ուժի մեջ են մտել սույն Կոնվենցիայի ուժի մեջ մտնելուց առաջ:

2. Կոնվենցիայի չեղյալ հայտարարումը չի շոշափում Կոնվենցիայի դրույթների կիրառումը մինչեւ չեղյալ հայտարարումն ուժի մեջ մտնելը կնքված պայմանագրերի նկատմամբ:

ՀՈՂ-ՎԱԾ 10

Սույն Կոնվենցիայի վավերագրերը գրանցման նպատակով ուղարկվում են Աշխատանքի միջազգային բյուրոյի Գլխավոր տնօրենին:

ՀՈՂ-ՎԱԾ 11

1. Սույն Կոնվենցիան պարտադիր է Աշխատանքի միջազգային կազմակերպության միայն այն անդամների համար, որոնց վավերագրերը գրանցված են Գլխավոր տնօրենի կողմից:

2. Այն ուժի մեջ է մտնում Կազմակերպության երկու անդամների վավերագրերը Գլխավոր տնօրենի կողմից գրանցվելու օրվանից տասներկու ամիս հետո:

3. Կազմակերպության յուրաքանչյուր անդամի նկատմամբ հետագայում սույն Կոնվենցիան ուժի մեջ է մտնում նրա վավերագրի գրանցումից տասներկու ամիս անց:

ՀՈՂ-ՎԱԾ 12

1. Աշխատանքի միջազգային կազմակերպության կանոնադրության 35-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթներին համապատասխան Աշխատանքի միջազգային բյուրոյի գլխավոր տնօրենին ուղարկվող հայտարարությունները նշում են՝

ա) այն տարածքները, որոնց նկատմամբ Կազմակերպության շահագրգիռ անդամը պարտավորվում է կիրառել սույն Կոնվենցիայի դրույթները առանց փոփոխությունների,

բ) այն տարածքները, որոնց նկատմամբ նա պարտավորվում է կիրառել սույն Կոնվենցիայի դրույթները փոփոխություններով, եւ՝ այդ փոփոխությունների մանրամասները,

գ) այն տարածքները, որոնց վրա Կոնվենցիան չի կիրառվի, եւ, այդպիսի դեպքերում, չկիրառվելու պատճառները,

դ) այն տարածքները, որոնց նկատմամբ նա վերապահում է իր որոշումները մինչեւ դրույթների հետագա վերանայումը:

2. Սույն հոդվածի առաջին կետի "ա" եւ "բ" ենթակետերում հիշատակված պարտավորությունները համարվում են վավերացման անբաժանելի մասը եւ նրա հետ ունեն միանման հետեւանքներ:

3. Կազմակերպության ցանկացած անդամ կարող է նոր հայտարարության միջոցով հրաժարվել սույն հոդվածի առաջին կետի "բ", "գ", "դ" ենթակետերի ուժով իր նախորդ հայտարարություններում պարունակված բոլոր վերապահումներից կամ դրանց մի

մասից:

4. Կազմակերպության ցանկացած անդամ այն ժամանակահատվածներում, որոնց ընթացքում սույն Կոնվենցիան կարող է չեղյալ հայտարարվել, 14-րդ հոդվածի դրույթներին համապատասխան, կարող է գլխավոր տնօրենին ուղարկել Նոր հայտարարություն, որը ցանկացած այլ առումով փոփոխում է ցանկացած Նախորդ հայտարարության պայմանները եւ տեղեկացնում որոշակի տարածքների ներկա դրության մասին:

ՀՈՂՎԱԾ 13

1. Այն հայտարարություններում, որոնք ուղարկվում են Աշխատանքի միջազգային բյուրոյի գլխավոր տնօրենին, Աշխատանքի միջազգային կազմակերպության կանոնադրության 35-րդ հոդվածի 4-րդ եւ 5-րդ կետերի դրույթներին համապատասխան, նշում են թե արդյոք սույն Կոնվենցիայի դրույթները տվյալ տարածքում կկիրառվեն փոփոխություններով, թե առանց փոփոխությունների: Եթե հայտարարությունում նշվում է, որ Կոնվենցիայի դրույթները կկիրառվեն փոփոխություններով, նրանում ճշտվում է, թե հիմնականում որոնք են նշված փոփոխությունները:

2. Կազմակերպության շահագրգիռ անդամը կամ անդամները կամ միջազգային մարմինը կարող են ցանկացած ժամանակ Նոր հայտարարության միջոցով լիովին կամ մասնակիորեն հրաժարվել Նախորդ որեւէ հայտարարությունում վերապահված փոփոխություններից օգտվելու իրավունքից:

3. Կազմակերպության շահագրգիռ անդամը կամ անդամները կամ միջազգային մարմինը այն ժամանակահատվածներում, երբ սույն Կոնվենցիան կարող է չեղյալ հայտարարվել, 14-րդ հոդվածի դրույթներին համապատասխան, կարող են Աշխատանքի միջազգային բյուրոյի գլխավոր տնօրենին ուղարկել Նոր հայտարարություն, որը ցանկացած այլ առումով փոփոխում է ցանկացած Նախորդ հայտարարության պայմանները եւ տեղեկացնում Կոնվենցիայի կիրառման հետ կապված գոյություն ունեցող դրության մասին:

ՀՈՂՎԱԾ 14

1. Սույն Կոնվենցիան վավերացրած Կազմակերպության յուրաքանչյուր անդամ կարող է նրա սկզբնապես ուժի մեջ մտնելու պահից սկսած տասնամյա ժամանակահատվածը

լրանալուց հետո այն չեղյալ հայտարարել չեղյալ հայտարարման վերաբերյալ ակտի միջոցով, որն ուղարկվում է Աշխատանքի միջազգային բյուրոյի գլխավոր տնօրենին եւ գրանցվում է նրա կողմից: Չեղյալ հայտարարումը ուժի մեջ է մտնում չեղյալ հայտարարման վերաբերյալ ակտի գրանցումից մեկ տարի հետո:

2. Սույն Կոնվենցիան վավերացրած Կազմակերպության յուրաքանչյուր անդամ, որը Նախորդ կետում նշված տասնամյա ժամանակահատվածը լրանալուց հետո մեկամյա ժամկետում չի օգտվի սույն հոդվածում Նախատեսված չեղյալ հայտարարման իր իրավունքից, պարտավորված կլինի հաջորդ տասնամյա ժամանակահատվածում եւ որպես արդյունք կկարողանա սույն Կոնվենցիան չեղյալ հայտարարել յուրաքանչյուր տասնամյա ժամկետը լրանալուց հետո՝ այն կարգով, որը սահմանված է սույն հոդվածով:

ՀՈՂՎԱԾ 15

1. Աշխատանքի միջազգային բյուրոյի գլխավոր տնօրենը Աշխատանքի միջազգային կազմակերպության բոլոր անդամներին տեղեկացնում է Կազմակերպության անդամներից վավերացման վերաբերյալ իր ստացած բոլոր փաստաթղթերի, հայտարարությունների եւ չեղյալ հայտարարման վերաբերյալ բոլոր ակտերի գրանցման մասին:

2. Կազմակերպության անդամներին տեղեկացնելով իր ստացած վավերացման վերաբերյալ երկրորդ փաստաթղթի գրանցման մասին՝ գլխավոր տնօրենը նրանց ուշադրությունը հրավիրում է սույն Կոնվենցիայի ուժի մեջ մտնելու թվականի վրա:

ՀՈՂԿԱԾ 16

Աշխատանքի միջազգային բյուրոյի գլխավոր տնօրէնը, Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրության 102-րդ հոդվածին համապատասխան, Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր քարտուղարին գրանցման համար ուղարկում է ամբողջական տեղեկություններ վավերացման վերաբերյալ բոլոր փաստաթղթերի, հայտարարությունների եւ չեղյալ հայտարարման վերաբերյալ բոլոր ակտերի մասին, որոնք իր կողմից գրանցվել են նախորդ հոդվածների դրույթներին համապատասխան:

ՀՈՂԿԱԾ 17

Աշխատանքի միջազգային բյուրոյի Ղեկավար մարմինը ամեն անգամ, երբ անհրաժեշտ է համարում, Գլխավոր խորհրդաժողովին գեկուցագիր է ներկայացնում սույն Կոնվենցիայի կիրառման մասին եւ որոշում է, թե պետք է արդյոք խորհրդաժողովի օրակարգում հարց մտցնել նրա լրիվ կամ մասնակի վերանայման մասին:

ՀՈՂԿԱԾ 18

1. Այն դեպքում, եթե խորհրդաժողովն ընդունի նոր կոնվենցիա, որն ամբողջովին կամ մասնակիորեն կվերանայի սույն Կոնվենցիան, եւ եթե նոր կոնվենցիայում նախատեսված չլինի հակառակը, ապա՝

ա) Կազմակերպության որեւէ անդամի կողմից նոր, վերանայող կոնվենցիայի վավերացումը ինքնաբերաբար, անկախ 14-րդ հոդվածի դրույթներից, առաջ է բերում սույն Կոնվենցիայի անհապաղ չեղյալ հայտարարում՝ այն պայմանով, որ նոր, վերանայող կոնվենցիան ուժի մեջ մտած լինի,

բ) նոր, վերանայող կոնվենցիայի ուժի մեջ մտնելու թվականից սկսած՝ սույն Կոնվենցիան փակ է Կազմակերպության անդամների կողմից վավերացվելու համար:

2. Սույն Կոնվենցիան բոլոր դեպքերում ըստ ձեւի եւ բովանդակության մնում է ուժի մեջ Կազմակերպության այն անդամների նկատմամբ, որոնք այն վավերացրել են, բայց նոր, վերանայող կոնվենցիան չեն վավերացրել:

ՀՈՂԿԱԾ 19

Սույն Կոնվենցիայի անգլերեն եւ ֆրանսերեն տեքստերը հավասարազոր են:

Կոնվենցիան ուժի մեջ է մտել 2006թ. մայիսի 18-ից: